



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

ՈՂԽԱՐՆԵՐԻ ՊԱՐԱԶԻՏՈՑԱՌԻՆԱՆ ԵՐԵՎԱՆԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Հ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Լ.Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա.Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ,
ՀԱՅԹԱՄ ԱԼ ԲԱՔՐԻ, Վ.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
naghov@rambler.ru

Հայաստանի պայմաններում հետազոտված ոչխարների պարազիտոֆաունայում գերակշռում են էլմերիաները, այնուհետև ըստ հաջորդականության աղիքային ստրոնգիլատները, տրեմատոդները և ցեստոդները: Ոչխարների մակաբույծներով առավելագույն վարակվածությունը արձանագրվել է ամռան վերջին և աշնան սկզբին:

էլմերիաներ – տրեմատոդներ – ցեստոդներ – նեմատոդներ – թրթուր – ձու

В условиях Армении в паразитофауне овец преобладают эймерии, далее по очередности следуют кишечные стронгилаты, трематоды и цестоды. Самая высокая зараженность овец была зарегистрирована в конце лета и в начале осени.

Эймерии – трематоды – цестоды – нематоды – личинка – яйцо

Pest fauna of sheep investigated in Armenia includes eymerias, intestinal strongilatas, trematods and cestods. It was found that sheep were most infected in the late summer and early autumn.

Eimeria – trematods – cestods – nematods – larva – egg

Ոչխարների ինվազիոն հիվանդությունները մեծ տարածում ունեն աշխարհում՝ այդ թվում նաև մեր երկրում:

Հայաստանում ոչխարների ինվազիոն հիվանդությունների տարածմանը և նույն տարածքում հարուցիչների շրջանառությանը նպաստում են մի քանի գործոններ՝ երկարատև արոտային պահվածքը և միևնույն արոտավայրերի մշտական շահագործումը, մսուրային շրջանի խիտ պահվածքը, արոտավայրերում շփումը վայրի որոճողների և գիշատիչների հետ, ինչպես նաև կլիմայի գլոբալ տաքացումը և այլն:

Հայտնի է, որ այդ հիվանդությունները զգալի վնաս են հասցնում ոչխարաբուծությանը, որն արտահայտվում է ստացվող մթերքի քանակի և որակի նվազեցմամբ, ինչպես նաև իրականացվող բուծ-կանխարգելիչ միջոցառումների ֆինանսական ծախսերով:

Ոչխարների ինվազիոն հիվանդությունների ախտաբանությունում մեծ է խառը ինվազիայի դերը: Մեկ կենդանու մոտ համդիպում են տարբեր տիպերի պատկանող մի քանի որդեր, համատեղության կարգով որոշ ախտածին նախակենդանիներ և այլ մակա-բույծներ [1-8]:

Անասնաբուժական մակաբուծաբանության արդի ամենակարևոր խնդիրներից է համարվում կենդանի օրգանիզմում մակաբույծների՝ բիոցենոզի ուսումնասիրությունը և բացահայտումը, ինչպես նաև դրանց նկատմամբ հիմնավորված պայքարի միջոցառումների մշակումը:

Հայաստանի պայմաններում մանր եղջերավոր կենդանիների մակաբույծների ֆաունայի ուսումնասիրությունները կատարվել են անցյալ դարի 60-70-ական թվականներին և առավելապես մեծ ուշադրություն է դարձվել մոնոինվազիաների վրա:

Ելնելով վերոհիշյալից՝ աշխատանքի նպատակն էր Հայաստանի Հանրապետության մի քանի մարզերի օրինակով ուսումնասիրել ոչխարների մարսողական համակարգում միաժամանակ մակաբուծող տեսակների կազմը:

Նյութ և մեթոդ. Հետազոտությունները կատարվել են 2012-2013 թթ. Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Վայոց Ձորի և Արմավիրի մարզերի ֆերմերային տնտեսություններում՝ գարուն-աշուն կտրվածքով, իսկ լաբորատոր հետազոտությունները՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոնի մակաբուծաբանական հետազոտությունների լաբորատորիայում:

Հետազոտության են ենթարկվել տարբեր հասակային խմբերի պատկանող 250 գլուխ գառներ և հասուն ոչխարներ, որոնց ուղիղ աղիքից վերցված կղկղանքը ուսումնասիրվել է մակաբուծաբանությունում հայտնի՝ հելմինթոսկոպիկ և հելմինթոլարվոսկոպիկ մեթոդներով [1]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ոչխարների պարագիտոֆաունայի այսպիսի լայնածավալ հետազոտություններ Հայաստանում կատարվում են առաջին անգամ:

Արդյունքներ և քննարկում: Տարվա կտրվածքով կատարված հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ նշված մարզերի ֆերմերային տնտեսություններում բուժվող ոչխարների 85 % վարակված էին խառը ինվազիայով:

Էյմերիոզ-նեմատոդային ինվազիայով վարակված ոչխարները կազմում էին հետազոտված կենդանիների 77 %: Էյմերիոզ-ցեստոդային ինվազիայով վարակվածները կազմում էին հետազոտված կենդանիների 40-60 %: Էյմերիոզ-տրեմատոդային ինվազիայով վարակվածները - 50-60%:

Միաժամանակ, խառը ինվազիայով (էյմերիոզ, տրեմատոդ, ցեստոդ, նեմատոդ) վարակվածները կազմում էին 20-30%:

Էյմերիոզ-նեմատոդային ինվազիայով վարակված կենդանիների կղկղանքի նմուշների մեկ տեսադաշտում հայտնաբերվել են 15 և ավելի *Eimeria* spp.-ի օոցիստներ, 3-5 հատ *Nematodirus* spp.-ի ձվեր, 1-2 հատ *Trichocephalus ovis*-ի ձվեր:

Էյմերիոզ-ցեստոդային ինվազիայով վարակված կենդանիների կղկղանքի նմուշների մեկ տեսադաշտում հայտնաբերվում էին 10-15 հատ *Eimeria* spp.-ի օոցիստներ, 1-3 հատ *Monesia* spp.-ի, *Thysanezia giardi*-ի կամ *Avitellina centripunctata* հարուցիչների 1-3 հատ ձվեր:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նշված ցեստոդների ձվերը հետազոտված կենդանիների կղկղանքում երբեք միաժամանակ չեն հայտնաբերվել:

Էյմերիոզ-տրեմատոդային ինվազիայով վարակված կենդանիների կղկղանքի նմուշների մեկ տեսադաշտում հայտնաբերվել են 10-15 հատ *Eimeria* spp.-ի օոցիստներ, 1-2 հատ *Fasciola hepatica*-ի և 3-4 հատ *Dicrocoelium lanceatum* հարուցիչների ձվեր:

Խառը ինվազիայով (էյմերիոզ, տրեմատոդ, ցեստոդ, նեմատոդ) վարակված ոչխարների կղկղանքի նմուշների մեկ տեսադաշտում հաճախ հայտնաբերվել էին 10-15 *Eimeria* spp.-ի օոցիստներ, 1-2 *Fasciola hepatica*-ի և 3-4 *Nematodirus* spp.-ի և 1-2 *Monesia* spp. ձվեր:

Կենդանիների առավելագույն վարակվածությունը խառը ինվազիայով արձանագրվել է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Այսպիսով, Հայաստանի պայմաններում հետազոտված ոչխարների մոտ առավելապես գերակշռում է խառը ինվազիան: Ոչխարների՝ հատկապես գառների պարագիտոֆաունայում գերակշռում են էյմերիաները, այնուհետև ըստ հաջորդականության աղիքային ստրոնգիլատաները, տրեմատոդները և ցեստոդները: Ոչխարների մակաբույծներով առավելագույն վարակվածությունը արձանագրվել է ամռան վերջին և աշնան սկզբին:

Ոչխարների պարագիտոֆաունայի պարզաբանումը կնպաստի պլանային բուժկանխարգելիչ միջոցառումների ճիշտ և հիմնավորված կազմակերպմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Զ. Նաղաշյան. Կենդանիների ինվազիոն հիվանդություններ: Լաբորատոր-գործնական պարապմունքների ձեռնարկ, Երևան, 2006, 5-14 էջ:
2. Зиборов Н.И. Распространение, сезонная и возрастная динамика ассоциативного заболевания, вызванного эймериями, нематодами и цестодами желудочно-кишечного тракта у овец на юге Казахстана . Инновационные болезни с.-х. животных и их профилактика. Алматы, с.13-23, 1996.
3. Литвинский Я.П., Кулаковская О.П. Возрастные особенности эймерий стронгилят в паразитоценозе кишечника овец в специализированных овцеводческих хозяйствах промышленного типа. Меры борьбы с болезнями животных и птицы в комплексах УССР. Киев, с.39-49, 1983.
4. Муромцев, А.Б. Основные гельминтозы жвачных животных в Калининградской области (эпизоотология, патогенез, лечебно-профилактические мероприятия): автореф. дисс... докт. вет. Наук. СПб. гос. акад. вет. медицины; А.Б. Муромцев. СПб., с. 9-16, 2008.
5. Приходько Ю.П., Манжос А.Ф., Коломацкий А.П., Сумцов В.В. Сочетанные инвазии овец в специализированных хозяйствах. Тезисы докладов II Всесоюзного съезда паразитоценозов. Киев, с. 285-286, 1983.
6. Coop, R.L., Holmes, P.H. Nutrition and parasite interaction. Int. J.Parasitol. 26, 951-962, 1996.
7. Foreyt W.J.Coccidiosis and cryptosporidiosis in sheep and goats. Vet Clin North Am Food Anim Pract. Nov., 3, 6, 655-70, 1990.
8. Saratsis A, Karagiannis I, Brozos C, Kiossis E, Tzanidakis N, Joachim A, Sotiraki S. Lamb eimeriosis: Applied treatment protocols in dairy sheep production systems. Vet Parasitol. Feb 1. pii: S0304-4017, 2013.

Ստացվել է 01.11.2013